


478







622

ՊՈԼՈԺԵՆԻԱ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

ՅԱՂԱԳԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՅ

ԼՈՒՍԱԿՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ի Նախագաղափարին իսկական
Ճեռամբ Նորին կայսերական մե-
ծութեան մակագրեալ է

ԵՊԻՑԻ ԸՆՏ Ա.ՅՄՄ

Ի Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐՔ.

11 Մարտի 1836

ՏՊԵԱԼ. Ի Ա. ԷԶՄԻԱՆԻՆ ԶԱՄԻ ՏԵԱՌՆ 1836



60.0.160.109

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

ՑԱՂԱԳՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՑ

ՀՈՒՍՈՒՐՉՈԿԱՆ ՀՅՈՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ
Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

Ցաղագս ընդհանրական իրաւանց եւ արտօնութեանց
Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ .

ՅՕԴՈՒԱԾ 1. Լուսաւորչական Եկեղեցին Հայոց 'ի կայսերութեան Ռուսաց հաւասար այլոց օտարազգի գաւանութեանց կայ ընդամենողորմ հովանաւորութեամբ կայսեր :

ՅՕԴ. 2. Ի բոլոր կայսերութեան Ռուսաց թոյլատրի աղատ դաւանութիւն հաւատոյ ըստ ծիսի Լուսաւորչական Եկեղեցւոյն Հայոց , այնպէս զի անդամք նորին՝ ըստ զօրութեան ընդհանուր թագաւորական օրինադրութեանց զգուշացին ամենայնիւ 'ի զլանալոյ զպատկանեալ յարդանս առ այլ հաւատոս որք ունին զաղատ գաւանութիւն 'ի կայսերութեան, մանաւանդ 'ի նորահաւատութենէ (պրօդէլիտիզմ) (1) որ խստիւ արդիլեալ է օրինօք տէրութեան :

(1) Նորահաւատութիւն (պրօդէլիտիզմ) է բառ լատինական . այս վերացեալ անուն 'ի կիր ածի 'ի Ռուսս եւ նշանակէ որսալ զայլս յիւր գաւանութիւն .

ՅօԴ. 3. Մատակարարութիւն աստուածա-
յին պաշտամանց և կառավարութիւն հոգե-
ւորական գործոց եկեղեցւոյն Լուսաւորչական
Հայոց յանձն լինի ուխտի եկեղեցականաց նո-
րին ըստ զօրութեան օրինաց և կարգադրու-
թեան նոյն եկեղեցւոյ :

ՅօԴ. 4. Եկեղեցականք Լուսաւորչական Հա-
յոց՝ յամենայնի որք միանգամ վերաբերին առ
պարզ հոգեւոր պարտաւորութիւնս . կան միայն
ընդ տեսչութեամբ հոգեւոր իշխանութեան
իւրեանց՝ զորմէ և կախին :

ՅօԴ. 5. Հոգեւոր գործք ամենայն եկեղե-
ցական պաշտօնէից Լուսաւորչական եկեղեցւոյ
Հայոց Ռուսաստանեայց ենթարկին քննութեան
և վճռոյ հոգեւոր ատենից այնը եկեղեցւոյ .
իսկ ՚ի վէճս և յայլ քաղաքական գործս , ընդ-
իրեարս , կամ ընդ այլ անձինո՝ որք ոչ են յե-
կեղեցականաց Լուսաւորչական Հայոց , նաեւ
՚ի քրէական (1) և յայլ ամենայն գործս են-
թարկին , նոքա վերատեսչութեան քաղաքական
գատարանաց ըստ հասարակեալ կանոնի , նշա-
նակելով զմի ոք ՚ի հոգեւորական կողմանէ
տէպուտաբ (2) ՚ի դիպուածս , ուր օրէնք հրա-

(1) Քրէական . բառիւս քրէական գործք՝ պարտ է
իմաննալ զամենայն ոճրագործութիւնս վերաբերեալս
արեան գատաստանի . մարդասպանութիւն , գողու-
թիւն , աւաղակութիւն , ընդդէմ կրօնի կայսերական
օրինաց եւ այլ սոյնպիսիս , որք Ռուսերէն կոչին (ու-
գոլովի , կամ ըստ Լատինացւոց կէմինալ :

(2) Դէպուտատ . է բառ Լատինական , եւ նշանա-

մայեն գտանիլ դէպուտատին վասն հաղորդակցութեան 'ի քննութեան նոյն գործոցն :

80Դ. 6. Եկեղեցականք Լուսաւորչական Հայոց Ռուսաստանեայց աղատ են յամենայն հարկատութեանց և 'ի քաղաքական պահանջողութեանց :

80Դ. 7. Սրբազնագործ պաշտօնեայք Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ կանայք և զաւակունք նոցա յոշինչ դիպուածու ենթարկին մարմնաւոր պատժոյ :

80Դ. 8. Եկեղեցական անդամք Լուսաւորչական Հայոց Ռուսաստանեայց՝ հաւասար ամենայն հաւատարիմ հպատակաց կայսերական մեծութեան իրաւունս ունին ստանալոյ զամենողոմ պարգեւս 'ի Նորին կայսերական մեծութենէ յաղագս ջերմեռանդութեան իւրեանց և արդիւնաւորութեանց :

Կէ ընտրեալ 'ի գործս աշխարհականաց ընդ հոգեւորականաց եւ զինւորականաց կամսոցին ընդ հոգեւորականաց, կամ 'ի վէճս 'ի մասին Եկեղեցական կալուածոց ընդ արքունեաց, ընտրի եւ կարգի 'ի գտատարանս 'ի կողմանէ հոգեւորականաց կամ զինւորականաց՝ որոց հարկին պահանջէ, վասն ներկայ գտանելոյ 'ի ժամ քննութեան եւ վճռոյ գործոյն, առ որ նա նշաննակեալն է : Պարտաւորութիւնն է սորա ջատագովել զիրաւունս անձին կամ ատենին, յորմէ ընտրեալ է, ունել զծիշդ նկատողութիւն, զի չիցէ աշառութիւն ինչ յընթացս քննութեան գործոյն : Աս 'ի ժամ քննութեան ունի զձայն հաւասար միւս դատաւորացն ատենի :

ՅօԴ. 9. Եկեղեցիք Լուսաւորչական Հայոց
Ռուսաստանեայց իրաւունս ունին տիրելոյ ան-
շարժ կայից , այլ սակայն ոչ այլազգ կարեն 'ի
ձեռու բերել կամ օտարացուցանել զայնս , բայց
եթէ բարձրագոյն բարեհաճութեամբ կայսեր՝
որ իսնդրի 'ի ձեռն նախարարութեան ներքին
զործոց ըստ սահմանեալ կարգին :



ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս ծայրագոյն Պատրիարքի Էջմիածնի .

ՅօԴ. 10. Դվասաւոր կառավարութիւն Լու-
սաւորչական Եկեղեցւոյ Հայոց և ծայրագոյն
տեսչութիւն Եկեղեցականաց նորին և ճշդիւ
կատարումն կանոնաց և ծիսից այսր դաւա-
նութեան պատկանին Պատրիարքին Էջմիածնի ,
սմա գործակից լինի յամենացնի՝ Էջմիածնայ
Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսն , բայց
Պատրիարքն յոչինչ դէպս կարէ աւանդել ոչ
Սիւնհոգոսին , ոչ այլում իմիք ատենի կամ ան-
ձին զիշխանութիւն , դիրաւունս և զարտօնու-
թիւնսն՝ սեպհականեալս իւրում աստիճանի :

ՅօԴ. 11. Ծայրագոյն Պատրիարքն Էջմիած-
նի ընտրի յողջոյն ազգէ Լուսաւորչական Հա-
յոց ըստ կարդին սահմանելոյ առ այս :

ՅօԴ. 12. Ի դատարկանալ տեղւոյ ծայրա-
գոյն Պատրիարք կաթուղիկոսին ամենայն Հա-
յոց , Լուսաւորչական Սիւնհոգոսն Էջմիածնի

առաքէ զծանուցանողական նամակս յամենայն
վիճակս Լուսաւորչական Հայոց, որք ենն թէ
՚ի Ո.ուսաստան և թէ արտաքոյ սահմանաց
նորին, նաեւ նշանակէ զտարեւոր միջոց պո
ընտրութեան նորոյ Պատրիարքի :

80Դ. 13. Խւրաքանչիւր վիճակ Լուսաւոր-
չական Հայոց առ ընտրութիւն Պատրիարքի
նշանակէ զերկուս պատգամաւորս (դէպուտատ)
(1) զմի եկեղեցական և զմի աշխարհական :
Պատգամաւորն եկեղեցական պարախ լինել
կամ նոյն ինքն թեմակալ առաջնորդն, կամ
այլ ոք եկեղեցական նշանակեալ ՚ի նմանէ .
իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յա-
մենայն իշխանաւորաց, ՚ի հարիւրապետաց
(յիւզպաշեաց) ՚ի մելիքաց և յայլոց պատուա-
ւոր աշխարհական անդամոց Լուսաւորչական
Հայոց եկեղեցւոյ՝ որոց են իրաւունք ընտրու-
թեան ըստ վաղեմի ծխոփ այսր եկեղեցւոյ :

80Դ. 14. Ա.յսոքիկ ընտրեալ պատգամա-
ւորք եթէ չկարասցեն ներկայանալ անձամբ
՚ի վանս Էջմիածնի ցնշանակեալ ժամանակն
վասն ընտրութեան Պատրիարքի, ունին իրա-
ւունս յայտնել գրութեամբ զդատողութիւն
իւրեանց՝ հասուցանելով զայն ՚ի Սիւնհոդոսն
Էջմիածնի :

(1) Դէպուտատ · այս բառ դէպուտատ չունի զայն
նշանակութիւն, որ ՚ի ծանօթութեան Յ յօդուածոյն,
այլ նշանակէ պատգամաւոր կամ գործակալ, կամ
վէքիլ :

Յ0Դ. 15. Բաց 'ի պատգամաւորաց (դէպուտատ) մասնակցին յընտրութիւն Պատրիարքի ամենայն անդամք Լուսաւորչական Հայոց Սիւնկողոսին Էջմիածնի , եւ եօթն երիցագոյն եպիսկոպոսունք՝ որք յայնժամ գտանիցին յէջմիածին , իսկ 'ի դիպուտածո պակասութեան եպիսկոպոսաց , զայն թիւ լնուն երիցագոյն վարդապետք տեղւոյն :

Յ0Դ. 16. Նոյն լնորութիւնն յառաջանայ յէջմիածին 'ի Մայր Եկեղեցւոջ Ս. Գրիգորի Լուսաւորչին՝ ճիշդ պահպանութեամբ ծխոից սահմանադրելոց 'ի Լուսաւորչական Եկեղեցին Հայոց առ այս :

Յ0Դ. 17. Զկնի հաւաքման ձայնից բոլոր ժողովականաց և հասու լինելոյ գրաւոր դատողութեանց հասելոց 'ի Սիւնհողոսն ըստ զօրութեան 14 երորդ յօդուածոյն , չորեքին աւագագոյնք ըստ առաւելութեան ձայնիցն արւելոց 'ի նպաստ իւրեանց ճանաչին ունողք իրաւանց լնտրեալ լինելոյ 'ի կանդիտատ (1) . իսկ 'ի դիպուտածո հաւասարութեան ձայնի , վիճակն որոշեսցէ՝ թէ ո՞յք պարտին համարիլ աւագագոյնք 'ի նոցունց , բոլոր ժողովականք առնեն լնտրութիւն երկուց կանդիտատաց 'ի պաշտօն ձայրագոյն Պատրիարքի :

Յ0Դ. 18. Զկնի այսը լնտրութեան , ժողովն

(1) Կանդիտատ . է բառ Լատինական , եւ նշանակէ հետամուտ իշխանութեան կամ սլաշտօնատարութեան եւ կամ ընտրեալ :

առաքէ զերիս պատգամաւորս յանդամոց իւրոց առ գլխաւոր կառավարիչն վրաստանի , կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանդաց՝ որ յաղագս երկուց կանդիտատաց ընտրելոց առաջի առնէ Նորին կայսերական մեծութեան 'ի բարեհաճութիւն ընդ ձեռն նախարարութեան ներքին գործոց :

ՅՕԴ. 19. Թագաւոր կայսրն նշանակեալ ըզծայրագոյն Պատրիարքն էջմիածնի ղկաթուղիկոսն Հայկաղանց ամենողորմածաբար շնորհէ նմա զառանձին հրովարտակ վասն այսր աստիճանի , և հրամայէ զկնի երդնլոյն լինել հաւատարիմ առ գահն ամենայն Ռուսաց՝ կատարել զօծումն նորա ըստ վաղեմի ծիսի և սովորութեան Լուսաւորչական եկեղեցւոյն Հայոց :

ՅՕԴ. 20. Պատրիարքն էջմիածնի կրէ զնոյն տիտղոս (պատուանուն) զոր ունէին 'ի վաղընջուց ծայրագոյն Պատրիարքք կաթուղիկոսունք Հայկաղանց :

ՅՕԴ. 21. Յաստուածային պաշտամունս 'ի մէջ եկեղեցեաց Լուսաւորչական Հայոց անուն Պատրիարք կաթուղիկոսին յիշատակի անմիջապէս զինի կայսերն ամենայն Ռուսաց և օգոստափառ տան նորա :

ՅՕԴ. 22. Համաձայն նախնի սովորութեան , կաթուղիկոսն յելանել իւրում 'ի կաթուղիկոսարանէն կամ 'ի պարսպէ էջմիածնի , իրաւունս ունի յուղարկիլ 'ի պատուաւոր պահանորդաց՝ որ 'ի Հայոց պատկանելոց վանացն էջմիածնի , յոմանց անդամոց հոգեւորակա-

նութեանն և յերկուց եկեղեցական առտիճա-
նաւորաց՝ յորոց մին կրէ զգաւազանն կաթու-
ղիկոսական և միւսն զիաչվառ :

Յ0Դ. 23. Ըստ զօրութեան վաղեմի օրինաց
Լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց, Պատրիարքն
Էջմիածնի իբրեւ ծայրագոյն կաթուղիկոս Հայ-
կազանց՝ ինքն միայն ունի իրաւունս եփելոյ
և օրհնելոյ զսուրբ միւռոնն վասն ամենայն
եկեղեցեաց այսր դաւանութեան :

Ծանօթութիւն. Բաշխումն Ս. միւռոնի ՚ի Պատ-
րիարքէ և ՚ի նուիրակացն առաքելոց ՚ի նմանէ
լինի ըստ ամենայնի ձրիաբար :

Յ0Դ. 24. Պատրիարքն Էջմիածնի իբրեւ հո-
գեւոր հովուապետ Հայկազանց ձեռնադրէ
զթեմակալ առաջնորդս և զայլ ամենայն եպիս-
կոպոսունս լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց,
դիտելով զի համեմատ վաղեմի կանոնաց նոյն
եկեղեցւոյ մի՛ բազմացի թիւ անթեմ եպիս-
կոպոսաց առանց յայտնի հարկաւորութեան :

Յ0Դ. 25. Պատրիարքն հետեւելով վաղեմի
կանոնադրութեանց լուսաւորչական եկեղեցւոյ
Հայոց, և հասու լեալ կանխաւ կարծեաց Սիւն-
հոդոսին Էջմիածնի՝ տայ զգախճանական վճիռ
ամենապարզ հոգեւոր գործոց վերաբերելոց
առ վարդապետութիւնս հաւատոյ, առ պաշ-
տամունս եկեղեցւոյ և առ այլս սոյնպիսիս :

Յ0Դ. 26. Ծայրագոյն Պատրիարքն Էջմիածնի
ունի իրաւունս վարձատրելոյ՝ Կամեմատ կար-
գաւորութեան լուսաւորչական եկեղեցւոյ Հա-
յոց զառաքինի և զօգտաւէտ անդամն ուխտի

Եկեղեցւոյն Հայոց լանջական խաչիւք , համբառ-
իոյ կոչեցեալ զ լիսարկօք և արտիվու :

ՅՕԴ. 27. Պատրիարքն Էջմիածնի իբրեւ ընդ-
հանուր հոգեւոր հովիւ Հայկազանց՝ ըստ օրի-
նակի Հայրապետին Ներսիսի Շնորհալի կոչե-
ցելոյ (1) ընդ ժամանակս ժամանակս առաքէ
զՀայրապետական կոնդակս հանդերձ օրհնու-
թեամբ իւրով առ Լուսաւորչական Հայս ամե-
նայն տեղեաց և կողմանց , յորդորելով զնոսա-
պու խաղաղական և առաքինի կեանս , և առ
հնազանդութիւն օրինաւոր իշխանութեանց
համաձայն կանոնաց Սրբոյ Աւետարանի :

ՅՕԴ. 28. Ի բազմիւ կայսերաց ամենայն Ո.ու.
սաց յաթու նախահարց , Պատրիարքն Էջմիա-
ծնի առաքէ զմի ոմն ՚ի նախապատիւ անդամոց
ուխտի Լուսաւորչական Հայոց Եկեղեցականաց՝
մատուցանել Նորին կայսերական մեծութեան
շամենահպատակ շնորհաւորութիւն , խնդրելով

(1) Թէպէտ բնագիրն Ռուսաց փոխանակ բառին
(Շնորհալի) եղեալ է ողորմած , (միլօստիվի) , բայց ո-
րովնետեւ հոգեչնորհ կաթուղիկոսն մեր Ներսէս
Շնորհալի կոչէր եւ ոչ ողորմած , եւ կարծելով թէ
այս իցէ սխալումն մի միայն թարգմանչին՝ որ թարգ-
մանեալ է զայս բառ ՚ի Հայոց լեզուէ ՚ի Ռուս (ողօր-
մած) ես վստահացայ աստանօր գնել զայն յիսկական
ոշանակութեան իւրում , որպէս ՚ի մեր լեզու , եւ
զրել զայս ծանօթութիւն , զի մի ոք մեղադիր լիցի
ինձ յանուղիղ թարգմանութիւն (միլօստիվի) բառին
շնորհալի , որ ՚ի Ռուս լեզու ամի (բլաղոգատնի) կամ
(իսպօլնէհնի բլաղոգատի):

զամենողորմ բարեհաճութիւնն յաղագս առաջիկայ գտանելց ՚ի հանդիսի թագադրութեանն ինքեան , և կամ ՚ի դէպս անհնարութեան դէպութիւնը իւրում :

ՅՕԴ. 29. Համաձայն կանոնաց լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց , ծայրագոյն Պատրիարք կաթողիկոսն՝ զհաստատուն բնակութիւն իւր ունի ՚ի վանս Էջմիածնի . Յորժամ հարկաւոր համարի նա հեռանալ ՚ի վանաց անտի աւելիքան զշորս ամիսս , հարցանէ առ այս ՚ի ձեռն գլխաւոր կառավարչին Վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգաց , և ՚ի ձեռն նախարարութեան ներքին դործոց զբարձրագոյն հաճութիւն նորին կայսերական մեծութեան :

ՅՕԴ. 30. Պատրիարքն Էջմիածնի ունի իրաւունս տալոյ զարձակուրդ որպէս անդամոց լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսի , նոյնպէս և Ծեմակալ առաջնորդաց և ընդհանրապէս ամենայն եպիսկոպոսաց այսր գաւանութեան չորեքամսեայ ժամանակաւ , յերկարատեւ արձակուրդս և արտաքոյ սահմանի (այսր տէրութեան) Պատրիարքն արձակէ զնոսա բարձրագոյն կամօք կայսերն : Յանդամոց Սիւնհոդոսի ոչ աւելի քան երկու կարեն արձակիլ ՚ի միում ժամանակի :

ՅՕԴ. 31. Պատրիարք կաթուղիկոսն իրրեւ անմիջական դիտապետ վանացն Էջմիածնի տնօրինէ զգործս նորին սեպէհական նկատողութեամբ իւրով , ըստ ճիշդ զօրութեան եկեղեցական կանոնաց :

ՅօԴ. 32. Ի վախճանիլ Պատրիարք կաթուզիկոսին, անյապաղ ժողովի Հայոց Լուսաւորչական Սիւնհողոսն Էջմիածնի առ ՚ի զգուշանալ որպէս թղթոցն եղելոց առնմա և վերաբերելոց առ գործու կառավարութեան և եկեղեցւոյ, նոյնպէս և ընդ տեսչութեամբ նորին եղեալ եկեղեցական գոյից :

Ծանօթութիւն . Պատրիարքն իշխան է տնօրինել զսեպհական գոյս իւր ըստ իւրում հաճութեան . Եթէ չիցէ արարեալ կտակ, գոյք նորա անցանեն առ օրինաւոր ժառանդու նորին, իսկ եթէ չիցեն նմա ժառանդք, այն կայք հաշուին ընդ գոյս Լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց :

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Լուսաւորչական Հայոց Սիւնհողոսին
Էջմիածնի .

ՅօԴ. 33. Լուսաւորչական Հայոց Սիւնհողոսն Էջմիածնի ընդ նախաղահութեամբ ծայրագոյն Պատրիարք կաթուզիկոսին՝ բաղկանայ ՚ի չսրից արքեպիսկոպոսաց կամ յեպիսկոպոսաց և ՚ի նոյնաթիւ վարդապետաց՝ որք զհաստատուն բնակութիւն իւրեանց ունին յԷջմիածնի :

ՅօԴ. 34. Առ իւրաքանչիւր տեղի անդամոց Լուսաւորչական Հայոց Սիւնհողոսին՝ Պատրիարքն ՚ի ձեռն գլխաւոր կառավարչին վրաստանի կովկասեան եւ յանկոյս կովկասու եղ-

եալ նահանգաց, եւ ՚ի ձեռն նախարարութեան ներքին գործոց առաջի առնէ թագաւոր կայսերն զերկուս կանդիտառու :

Յօդ. 35. Առ պարագայս գործողութեան Հայոց Լուսաւորչական Սիւնհոդոսին ՚ի մասին կառավարութեան վերաբերին .

1. Դիտողութիւն ՚ի վերայ գործառնութեանց ամենայն ատենից եւ պաշտօնատար անձանց ստորադրելոց այսմ Սիւնհոդոսի :

2. Վերատեսչութիւն բարեկարգութեանց նը. մին ստորադրեալ վանօրէից, եկեղեցեաց, գըպ-րոցաց և աստուածահաճոյ շինուածոց :

3. Վերատեսչութիւն կարգին կառավարութեան գոյից Լուսաւորչական եկեղեցեաց Հայոց.

4. Նախընթաց քննութիւն գործոց վերաբերելոց առ շինութիւն վանօրէից, եկեղեցեաց և գպրոցաց, և խնդրումն առ այն ՚ի ձեռն դլխաւոր կառավարչին վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգաց, և ՚ի ձեռն նախարարութեան ներքին գործոց բարձրագոյն հրամանի կայսեր :

5. Թոյլատուութիւն Հայկաղանց Լուսաւորչական եկեղեցւոյ յազատ վիճակ եղելոց՝ ընդունիլ զկարգ եկեղեցական և նուիրել զանձինս ՚ի վանականութիւն .

6. Թոյլատուութիւն մերկանալոյ զլանականութիւն և ընդհանրապէս զհոդ և որական կարգ :

7. Վախճանական վերահասութիւն գործոց ըստ խնդրական բանից յաղագս մոանելոյ յամուսնութիւն :

8. Թողյլատուութիւն ժողովելոյ ՚ի վիճակաց զկամաւոր նուէրս յօգուտ վանօրէից, եկեղեցեաց, դպրոցաց և աստուածահաճոյ շինուածոյ այլոց վիճակաց:

9. Դիտողութիւն ՚ի վերայ խնամարկութեան որբոց և այրեաց սրբազնագործ և ստորին եկեղեցական պաշտօնէից :

10. Առաջարկութիւն կարծեաց՝ յորժամկաթուղիկոսն նախանշանակէ յաստիճան եպիսկոպոսութեան զեկեղեցականս առանց կարգելոյ ղնոսա միանդամայն ՚ի պաշտօն թեմակալի :

11. Առաջի առնել Պատրիարքին զդատողութիւնս իւր զայնց հոգեւորականաց՝ զորս կամինա առաքել ՚ի բաշխումն որբոյ միւռոնի :

12. Բացայայտութիւն կարծեաց առ հարցմունս առաջարկեալս ՚ի Պատրիարքէն՝ յԵղրակացուցանել :

13. Պահպանութիւն ճիշդ ցուցակաց Լուսաւորչական Հայոց ամենայն եկեղեցեաց, վանօրէից, դպրոցաց և ապաւուածահաճոյ շինուածոց՝ որ ՚ի սահմանս Ռուսիոյ առանձինն ըստ իւրաքանչիւր վիճակի :

14. Պահպանութիւն նոյնպիսի ցուցակաց յաղագս ամենայն որ ՚ի Ռուսաստան եկեղեցականաց ամուսնացելոց և կուսակրօնից Լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց, և այլոց անձանց պատկանելոց առ տեսչութիւն Սիւնհոգոսին :

15. Պահպանութիւն պատկանաւոր մատենից յաղագս ամենայն գոյից վանօրէից և եկեղեցեաց լուսաւորչական Հայոցիսահմանս Ռուսաստանի:

16. Առաջի առնել ամի ամի նախարարութեան ներքին գործոց ՚ի ձեռն զիսաւոր կառավարչին Վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու Եղեալ նահանդաց՝ զոարեկան ծանօթութիւնս զառարկայիցն նշանակելոց ՚ի յօդուածն 13-14 և 15 Երրորդ . զիսակատար տեղեկութիւնս յաղագս ծնելոց , մեռելոց և պսակելոց՝ որք ՚ի բոլոր Լուսաւորչական Հայոց վիճակս Ռուսաստանի և զընդհանուր տարեկան հաշիւ :

Յ0Դ. 36. Ի դատաստանական մասին, քննութեան և վճռահատութեան Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին Էջմիածնի՝ պատկանին .

1. Գանդատանք զանդամոց նոյն ինքեան Սիւնհոդոսին :

2. Գագատանք զթեմակալ առաջնորդաց Լուսաւորչական Հայոց վիճակաց , և զվիճակային (կոնսիստորէից) հոգեւոր ատենից :

3. Քննութիւն անկանոն գործողութեանց նոյն անդամոց նոյն Սիւնհոդոսի և թեմակալ առաջնորդաց :

4. Ամենայն գործք քննեալք ՚ի Լուսաւորչական Հայոց վիճակային հոգեւոր ատեանս , և մուծեալք ըստ բողոքանաց ՚ի Սիւնհոդոսն Էջմիածնի յաղագս պսակաց սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէիցն յանցաւորութեանց ոչ պատկանելոց մարմնաւոր դատարանաց , յաղագս վիճմանց նոյս ընդիւթեարս , և այլն :

Յ0Դ. 37 Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն

Էջմիածնի ընդ անմիջական վերատեսչութեամբ
ժայրագոյն Պատրիարքին տայ զվախճանական
վճիռ ամենայն գործոց վերաբերելոց առ վար-
դապետութիւնս հաւատոյ , առ եկեղեցական
պաշտամունս , ծէսս և պուակս , և առ այն
յանցաւորութիւնս եկեղեցականաց՝ որք ոչ
պատկանին քննողութեան մարմնաւոր դատա-
րանաց , այս Սիւնհոդոսս ըստ գործոց Լուսա-
ւորչական եկեղեցւոյ Հայոց Ուուսաստանեայց
կայ լնդ վերատեսչութեամբ կառավարիչ Սիւնկ-
զիտօսին (սէնաթօ) և նախարարութեան ներ-
քին գործոց , հաւասար այլոց ժայրագոյն հո-
գեւոր ատենից օտարազգի դպւանութեանց :

ՅՕԴ. 38. Վճիռք ըստ գործոց՝ որ յաղագս
գանդատանաց զթեմակալ առաջնորդաց և
զանդամոց Լուսաւորչական Հայոց Սիւնհոդո-
սին , նոյնպէս և զանկանոն գործողութեանց
նոցա՝ եթէ այսոքիկ եկեղեցականք դատա-
պարտին 'ի պատիժ ինչ , ոչ այլազգ ածին ՚ի
կատար , բայց եթէ դկնի յայտնելոյ բարձրա-
գոյն հրամանի կայսեր առ այն ընդ ձեռն նա-
խարարութեան ներքին գործոց :

ՅՕԴ. 39. Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն
Էջմիածնի՝ սուաջի առնէ նախարարութեան
ներքին գործոց 'ի ձեռն գլխաւոր կառավար-
չին Վրաստանի կովկասեան և յայնկոյս կով-
կասու եղեալ նահանգաց ղամենայն գործս և
գիւղուածո՝ որոց վասն խնդրի վճիռ նորին կայ-
սերական մեծութեան . կամ որոց վասն հար-
կաւոր են կարգադրութիւնքնախարարութեան ,

նաեւ զգործս՝ որք պահանջեն զհաղորդակցութիւն ընդ այլոց նախարարութեանց և ընդ գլխաւոր կառավարչաց առանձին մասանց թագաւորական կառավարութեան, նոյնպէս և զի՞էնս՝ որք կարեն ծագիլ 'ի մէջ Սիւնհոդոսի Հայոց և հոգեւոր իշխանութեան օտարազգի դաւանութեանց, և վերջապէս զպատահական երկբայութիւնս, թէ արդեօք այս ինչ գործ վերաբերի առ տեսչութիւն նորա, թէ ոչ : իսկ զգործս՝ յորս հարկաւոր են հաղորդակցութիւնք ընդ ոստիկանաց . (զեներալ Գուբէրնաթուաց) ընդ նահանգապետաց (Գուբէրնաթուաց) և ընդ այլոց տեղական կառավարութեանց, Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն էջմիածնի առաջի առնէ գլխաւոր կառավարչին Վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասուեղեալ նահանգաց :

ՅՕԴ. 40. Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն էջմիածնի վարի ըստ իրաւանց կոլլէգեայից (1), բայց յամենայն պարզ հոգեւորական գործս Պատրիարքն ունի զձայն վճռողական, իսկ

(1) (Կոլլէգեայ) է բառ լատինական եւ նշանակէ ժողով կամ ատեան, 'ի հնումն 'ի Առուսաստան կոլլէցւեայ+ էին ծայրագոյն ատեանք առաջին աստիճանի զկնի կառավարիչ սինկղիտոսին, այժմ չիք այնպիսի, եւ 'ի տեղի նոցա ունին այժմեան զանազան նախարարութիւնք, բաց յիննոստրանին կոլլէգեայէն՝ որ է ծայրագոյն ատեան այլասեռ ազանց : Այժմ այս բառ 'ի գործ ածի 'ի տեղի որպիսի եւ իցէ ատենի՝ ուր գործք վճռին 'ի վրայ հրամանի օրինաց :

յայլ գործս՝ եթէ հաւասար են ձայնք անդամոցն՝ ձայն նորա իբրեւ նախագահի, է հակամէտ (4) :

80Դ. 41. Ի քննութիւն իրաց՝ յորս պատրիարքն Էջմիածնի ունի զձայն վճռողական, չգըտանի անձամբ՝ ՚ի Սիւնհոդոսի, այլ հասու եղ. եալ եղբակացութեան Սիւնհոդոսին յօրագրութիւնս մատուցեալս նմա, տայ այնց զիւր վճիռ :

80Դ. 42. Յորժամ Պատրիարքն Էջմիածնի՝ ոչ գտանի անձամբ՝ ՚ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսի, զտեղի նորա ունի երիցագոյնն յարքեպիսկոպոսաց կամ յեպիսկոպոսաց անդամոց այսր Սիւնհոդոսի : Նա վարի ամենայն իրաւամբ նախագահի յայնոսիկ դէպս միայն, յորժամ Պատրիարքն ինքնին չ'կարէ ներկայ գտանիլ ՚ի պատճառս հիւանդութեան կամ բացակայութեան յէջմիածնէ : Իսկ պարզ հոգեւորական գործք՝ յորս Պատրիարքն ունի զձայն վճռողական յոշինչ դէպս կարեն վճուիլ առանց Պատրիարքին : Ի ժամ պարապութեան Պատրիարքական աթօռոյն, վճռահատութիւն

(4) Հակամէտ . Ռուսերէն (պէրէվսէ), բառս այս ՚ի գատաստանական ոճս ՚ի գործ ածի, եւ նշանակէ զթեքումն ծանրութեան կշռոյ ՚ի մի կողմն, ուստի ուր հակառակ ձայնք անդամոց Սիւնհոդոսի կամ այլոց ատենի հաւասար են միւլիանց, այսինքն չորեքին ասեն, այս այսպէս, եւ չորեքին այլազգ, յայնժամ ձայն գլխաւոր անդամոյն իբրեւ ատենապետի վճռէ զդատողութիւն այնորիկ կողման ընդ որ եւ համաձայն գտցի ինքն :

սոյն տեսակ գործոց յետաձգի ցընտրութիւն
նորոյ Պատրիարքին :

Յ0Դ. 43. Կարդ գործառութեան Լուսաւոր-
չական Հայոց Սիւնհոդոսին Էջմիածնի, իրաւունք
և պարտաւորութիւնք անդամոց և աստիճանա-
ւորաց գիււնատան նորին սահմանադրին ընդ-
հանուր կարգադրութեամբք՝ զորս ունին հու-
մական :

Յ0Դ. 44. Սիւնհոդոսն Էջմիածնի՝ ժողովի ե-
րիցս կամ գոնէ երկիցս յեօթնեկի նկատմամբ
գործոցն մտելոց անդր :

Յ0Դ. 45. Ի Սիւնհոդոսն Էջմիածնի լինի ա-
ռանձին Պրօկոպէ (1) կարգեալ 'ի կառավարիչ
Սիւնկղիատէն (սէնաթէն) յաստիճանաւորաց
որք գիտեն զլեզու Ռուսաց և Հայոց . նմա նը-
շանակի ռոճիկ յարքունի գանձարանէն համե-
մատ իւրում պաշտաման :

Յ0Դ. 46. Պրօկոպոր Լուսաւորչական Հայոց
Սիւնհոդոսին Էջմիածնի 'ի գործառութիւնս

(1) (Պրօկոպօր) . Է բառ Լատինական եւ նշանա-
կէ հոգաբարձու կամ խնամակալ, է աստիճանաւոր
ծայրագոյն գասու կարգեալ յիւրաքանչիւրում նա-
հանգի տէրութեան Ռուսաց :

Պարտաւորութիւն է սորա նկատել, զի 'ի գատա-
րանս ճշմարտութեամբ կատարեսցին օրէնք եւ սահ-
մանեալ կարգն օրինաց, ջատագով լինել որբոց եւ
այրեաց, եւ առ հասարակ ամենայն անձայն գատա-
պարտելոց եւ գլխաւորապէս արքունի սեպհականու-
թեանց, եւ ստիպել զդատարանս ճեպեցուցանել զըն-
թացս գատաստանական քննութեանց :

իւր վարի ընդհանրական կանոնադրութեամբք՝
որ վասն պարտաւորութեան Պրօկոլորի • Սոյն
սա ունի զմասնաւոր հսկողութիւն՝ ի վերայ դա-
տաստանական և կարգադրական գործոց յա-
ռաջադրելոց՝ ի Սիւնհոդոսի անդ, և առաջի-
կայ գտանի յընտրութիւն ծայրագոյն Պատ-
րիարքին էջմիածնի, զդատաստանական գոր-
ծոց Պրօկոլորօն առաջի առնէ (մինիստրու-
թեան իւստիցի) նախարարութեան իրաւանց.
իսկ զայլոց գործոց՝ նախարարութեան ներքին
գործոց : Նա նոյնպէս ըստ գործոցն Լուսաւոր-
չական Հայոց Սիւնհոդոսին էջմիածնի դիմէ
առաջարկութեամբք և առ զլիսաւոր կառա-
վարիչն Վրաստանի կովկասեան և յայկոյս կով-
կասու եղեալ նահանդաց :

80Դ. 47. Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն
էջմիածնի ունի զառանձին գանձապետ՝ զոր կար-
գէ ինքն Սիւնհոդոսն յեկեղեցական կամյաշ-
խարհական անձանց՝ որք իցեն հմուտ հաշուա-
րարութեան, նշանաւորք բարերարոյութեամբ
և անշահախնդրութեամբ : Սոյն գանձապետ
ունի ընդ տեսչութեամբ իւրով միայն զգու-
մարս դրամոց զպատկանեալ էջմիածնի Լու-
սաւորչական Հայոց Սիւնհոդոսին, առանց ձեռ-
նամուխ լինելոյ ՚ի գումարս վանացն էջմիածնի :

80Դ. 48. Գանձապետին Լուսաւորչական
Հայոց Սիւնհոդոսին հաւատացեալ լինի ըն-
դունել և պահպանել զամենայն գումարս
պատկանեալս նմին և ում հարկն է մատու-
ցանել յայնց սահմանեալ կարդաւն համա-

ձայն կանոնաւոր հրամանագրութեանց Հայոց Առևտութիւնի ամսութեանց Առաջական օրդոսին ըստ զօրութեան օրագրութեանց նորին :

Մանօնս-Ծիւն-Հոդոսն էջմիածնի ամսոյ յամիս առնէ զպարտուապատշաճ վերահասութիւն ամբողջութեամբ ամենայն առձեռն գումարաց և հաշուաթղթոց եղելոց ընդ պահպանութեամբ գանձապետին, և որ ինչ ցուցցի առ այն գրեյօրագրութեան :

Յ0Դ. 49. Գանձապետն ունի զպատշաճաւոր տումարս եկամտիցն և ծախուց ամենայն գըրամոց պատկանելոց Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսի . այսոքիկ տումարք ըստ ընդհանուր կարգին պարտին լինել ժապաւինեալ և հաստատեալ կնքով Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին և ստորագրութեամբ երկուց անդամոց նորին և Պրօկուրօրի :

Յ0Դ. 50. Ամենայն գումարք գրամոց Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսի , և գրաւոր վկայութիւն եկեղեցական գոյից եղեալք առ գանձապետն՝ պարտին պահպանել 'ի սենեկի անդ յառանձին արկեղ՝ ուր լինի ժողովն Սիւնհոդոսի . Արկղս այս փակեսցի երիւք զանազան կպեղոք , և կնքեսցի կնքով Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին , մին 'ի բանալեաց կպեղացն պահպանի առ դանձապետն , իսկ միւսքն՝ մէն մի առ այնոսիկ երկոսին անդամն Սիւնհոդոսին՝ որոց յատկապէս յանձնեալիցէ վերահասութիւն հաշուական գործոց նորին ,

այսոքիկ անդամք յիւրաքանչիւր նուագս բա-
նալոյ զարկղն պարտին առաջիկայ գտանիլ.

ՅՈՒ. 51. Գանձապետն ուշադիր լինի զի 'ի
Սիւնհոդոսական արկեղ մի՛ մնացեն առանց
հարկաւորութեան մեծամեծ գումարք դրա-
մոց, և առաջի առնէ լուսաւորչական Հայոց
Սիւնհոդոսին յաղագս տալոյ զգումարս նորա
յաճախումն տոկոսեօք ըստ օրինադրեալ կար-
գին, տեսչութիւն սոյն գումարաց 'ի ձեռու
մասնաւոր անձանց յայնժամ միայն թոյլատրի,
յորժամնոյն Սիւնհոդոսն ճանաչէ զայն շահա-
ւէտ, և այսու կերպիւ հաւատացեալ գու-
մարն մասնաւոր անձին ապահովեալ իցէ հա-
ւատարիմ գրաւականաւ :

ՅՈՒ. 52. Գիւանատունն Լուսաւորչական
Հայոց Սիւնհոդոսի բաղկանայ 'ի միոյ ատենա-
դպրէ (սէկրէտար), յերկուց օգնականաց նորին,
'ի թարգմանէ, 'ի գործադրէ (էկզէկուտօր),
'ի գործապահէ (արխիւարիւս) և 'ի հարկաւոր
թուոյ գրագրաց : Այսոքիկ աստիճանաւորք
կարգին ըստ ընտրութեան Սիւնհոդոսին էջ-
միածնի հաստատութեամբ Պատրիարքին :

ՅՈՒ. 53. Պրօկուրօրն Լուսաւորչական Հայոց
Սիւնհոդոսին է 'ի վեցերորդում կարդի (կլասի).
գանձապետն՝ եթէ իցէ նա յաշխարհականաց՝
յեօթներորդում. ատենադպիրն՝ յութերոր-
դում. գործադիրն և գործապահն՝ յիններոր-
դում. օգնական ատենադպրին և թարգմանն՝
'ի տասներորդում, ցորչափ մնան նոքա յայսո-
սիկ պաշտամունս, և եթէ չունին ըստ նախկին

ծառայութեան կամըստ այլոց տեղեաց զբարձ-
րագոյն աստիճանս :

ՅԴ. 54. Անդամք Հայոց . Լուսաւորչական
Սիւնհողուին Էջմիածնի՝ Պրօկուրօրին , գանձա-
պետն և աստիճանաւորք դիւանատան նորին ,
՚ի մտանելն ՚ի պաշտօն իւրեանց երգնուն ըստ
հասարակեալ կանոնի առ ՚ի հաւատարմու-
թեամբ ժառայել նորին կայսերական մեծու-
թեան և առ իսկութեամբ կատարելոց զպար-
տաւորութիւնս իւրեանց :

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս թեմակալ առաջնորդաց Լուսաւորչական
Հայոց եկեղեցւոյ .

ՅՕԴ. 55. Լուսաւորչական Հայոց եկեղեցիք
բաժանին ՚ի վիճակս՝ որք կառավարին յարքե-
պիսկոպոսաց այսր դաւանութեան :

ՅՕԴ. 56. Ի սահմանս Ռուսիոյ գտանին վեց
վիճակք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ :
Առաջին՝ Նախիջեւանայ և Բեսարապիոյ Երկ-
րորդն՝ Աստարիանայ . Երրորդն՝ Երեւանայ .
Չորրորդն՝ Վրաստանի . Հինգերորդն՝ Ղարա-
բաղայ . Եւ վեցերորդն՝ Շիրվանայ :

Վիճակին Նախիջեւանայ և Բեսարապիոյ պատ-
կանին Լուսաւորչական Հայոց եկեղեցիքն՝ որ
՚ի Ս. Պետերբուրգ , ՚ի Մակով , ՚ի գաւառս
նոր Ռուսիոյ և ՚ի նահանգին Բեսարապիոյ վի-

ճակին Աստարիսանայ այլ ամենայն Լուսաւոր-
չական Հայոց Եկեղեցիք՝ 'ի Ո.ուսիա՝ բաց ՚ի
Վրաստանէ և ՚ի գաւառացն, որ յայնկոյս կով-
կասու : Վիճակին Երեւանայ՝ Լուսաւորչա-
կան Հայոց Եկեղեցիք՝ որ ՚ի նահանգս Երեւա-
նայ, Նախիջեւանայ, Օրդու, Բատու և գա-
ւառին Շիրակայ . ՚ի սմա անկանի ՚ի վիճակէ
Ղարաբաղայ և մետրապօլտութիւն Տաթեւաց
հանդերձ բոլոր հօտիւ իւրով :

Առաջնորդ վիճակիս՝ ըստ վաղեմի կարգա-
դրութեան, Է նոյն ինքն Պատրիարքն՝ որ կա-
ռավարէ զայն ՚ի ձեռն յաջորդաց իւրոց և ու-
նի զնոսա ՚ի քաղաքն Երեւան, և ՚ի Նախիջե-
ւան Հայաստանի, նոյնպէս ՚ի Շիրակ և ՚ի Տա-
թեւ : Վիճակին Վրաստանի պատկանին Եկե-
ղեցիք Հայոց՝ որ են յատկապէս ՚ի Վրաստան,
՚ի գաւառն Գանձակայ (Ելիսավէտապօլսոյ) և
՚ի գաւառն Բօրչալուա, Ղաղախայ, Շամշատ-
նոյ և ըստ մասին Գամբակաձորոյ, յաշխարհին
Տայոց, յԱխալցխայ, յԻմերէթ, և ՚ի Գրւրիա,
յայսմ վիճակի կարգին յաջորդք թեմակալ ա-
ռաջնորդի ՚ի Գանձակ, ՚ի Տայս, և յԻմերէթ :
Վիճակին Արցախայ (Ղարաբաղայ) Լուսաւոր-
չական Հայոց Եկեղեցիք՝ որ ՚ի գաւառս յատ-
կացեալս Ղարաբաղու, ՚ի բաց առեալ զմետրա-
պօլտութիւնն Տաթեւայ հօտիւն հանդերձ և
Շաքւոյ և Թալիշոյ :

Յայսմ վիճակի կարգի յաջորդ թեմակալ ա-
ռաջնորդի ՚ի Շաքի :

Վիճակին Շիրուանայ պատկանին Եկեղեցիք

Լուսաւորչական Հայոց՝ որ ՚ի նահանգս Շիրուանայ, Ղուբայու, Բագւոյ և Գարբանդայ: Յայսմ վիճակի չիք առանձին յաջորդ դէմակալին:

Ծանօթութիւն. Գաղթականք Հայոց ՚ի Տաճկատանէ վերաբերեալք յաշխարհին Տայոց և ՚ի գաւառին Շիրակայ՝ կառավարին ըստ նախկին սովորութեան ՚ի գաղթելոցն ընդ նոսա ՚ի կարապետ և ՚ի Ստեփանոս արքեպիսկոպոսացն, անկախ ՚ի թեմակալ առաջնորդաց և անմիջապէս ստորագրեալ Պատրիարքին: Իսկ յելանել նոցա յայսոցիկ տեղեաց, կառավարութիւնն հոգեւորական գործոց նոյն գաղթականաց անցցէ հաւասար բնիկ ժողովուրոցն Հայոց յիշխանութիւն թեմակալ առաջնորդաց, գաղթականքն Շիրակայ կցորդին վիճակին Երեւանայ, իսկ գաղթականքն Տայոց՝ վիճակին Վրաստանի:

Յ0Դ. 57. Զթեմակալ առաջնորդս Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ՚ի Ռուսաստան նըշանակէ թագաւոր կայսրն յեկեղեցական աստիճանաւորաց այսր դաւանութեան: Նոքակարդին և արձակին բարձրագոյն հրովարտակօք: Ի մոտանել նոցա ՚ի պաշտօն, երդնուն վասն. հաւատարիմ հպատակութեան և ծառայութեան:

Յ0Դ. 58. Լուսաւորչական Հայոց արքեպիսկոպոսունք ՚ի Ռուսաստան՝ են լիակատար հոգեւոր առաջնորդք այսր դաւանութեան, ՚ի վիճակս յանձնեալս նոցա բարձրագոյն հրա-

մանաւ, և պատասխանառուու են դկառավարութենէ նոցին առաջի բարձրագոյն կառավարութեան և առաջի հոգեւոր իշխանութեան իւրեանց : Նոցա գործակցին 'ի կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց հոգեւոր ատեանք հաստատեալը յիւրաքանչիւր վիճակի:

Յօդ. 59. Թեմակալ առաջնորդ.ք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ 'ի սահմանս վիճակի իւրեանց ձեռնադրին 'ի զանազան աստիճանս հոգեւոր կարգի ըստ կարգադրութեան եկեղեցւոց իւրեանց և ըստ զօրութեան կանոնաց՝ որք սահմանեալ են առ այս 'ի նմա, և նկատեն զի թիւ սրբազնագործ և ստորին եկեղեցականաց պաշտօնէից մի՛ անցցէ ըստ չափ առանց ստիպող հարկի : 'ի վարդապետութիւն ձեռնադրին նոքա ոչ այլ ազդ, բայց եթէ հըրամանաւ Պատրիարք կաթուղիկոսին լշմիածնի:

Յօդ. 60. Թեմակալ առաջնորդ.ք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ կարեն արձակուրդաւալ ստորադրեալ եկեղեցականաց իւրեանց ոչ աւելի քան ղամփսա չորս . յառաւել երկարատեւ արձակուրդ խնդրեն նոքա ղճրաման ծայրագոյն հոգեւոր կառավարութեան իւրեանց՝ որ յաղագս ցանկացողացն ելանել արտաքոյ սահմանի տէրութեան առաջի առնէ բարձրագոյն կառավարութեան, ըստ հասարակեալ կանոնի :

Յօդ. 61. Լուսաւորչական Հայոց թեմակալ պոաջնորդ.ք պարտաւոր են անձամբ տալով օրինակ բարեպաշտութեան և ամենայն Քրիս-

տոնէական և քաղաքական առաքինութեանց ,
ջանադիր լինիլ ամենայն հնարիւք որք զինք-
եանց են կախեալ վասն բարեկարդութեան հո-
գեւոր հօտին յանձնելոյ ինքեանց :

ՅՕԴ. 62. Նոքա արթնութեամի դիտեն 'ի
վերայ ամենայն դործողութեանց եկեղեցա-
կանաց վիճակի իւրեանց , յորդորելով զնոսա
յառաքինական կեանս համաձայն վարդապե-
տութեան սրբոյն Աւետարանի :

ՅՕԴ. 63. Լուսաւորչական Հայոց թեմակալ
առաջնորդք՝ ջանալով վասն հաստատութեան
կանոնաց սրբոյ Աւետարանի և տարածութեան
բարի վարուց 'ի մէջ Հայոց եղելոց 'ի նոցա
յանձնեալ վիճակս , 'ի գործ դնեն առայս զհեղ
և զհամաձայն ճշմարիտ ոգւոյն Քրիստոնէու-
թեան եղանակս խրատուց և յորդորանաց :
Նոքա պարտապան են ըստ մարթելոյ Խոյս տալ
յայնմ ամենայնէ՝ որ ունի զցոյց աւելորդ Խըս-
տութեան :

ՅՕԴ. 64. Թեմակալ առաջնորդք Լուսաւոր-
չական Հայոց եկեղեցւոյ պարտապան են՝ եթէ
ոչ յիւրաքանչիւր ամի , դոնէ յընթայս երից
ամաց մի անդամ յայց ելանել վիճակացն բարձ-
րագոյն հրամանաւ յանձնելոց ինքեանց : Իսկ
եթէ բոլորովիմբ անմարթ իցէ անձամբ ընուլ
զայս պարտաւորութիւն , նոքա յանձնեն զայս
այցելութիւն եկեղեցեաց միում յառաւել
յուսալի հոգեւոր աստիճանաւորաց՝ ստորա-
դրելոց ինքեանց , տալով նմա խրատս պատ-
կանեալս 'ի հրահանգութիւն նորին :

Յ0Դ. 65. Ի ԺԱՄԱՆԱԿԻ Այցելութեան վիճակաց նոքա մտադիր լինին յատկապէս որպիսութեան եկեղեցականաց, վանօրէից և եկեղեցեաց, կարճելով զամենայն անկարգութիւնս զառ, 'ի յինքեանց 'ի յայտ բերեալս և 'ի գործդնելով հնարս առ 'ի զառաջս առնլոյ նորոգման նոցին :

Յ0Դ. 66. Թեմակալ առաջնորդք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ դարձուցանեն նոյնպէս զճիշդ մտադրութիւն իւրեանց 'ի վերայ որպիսութեան դպրատանց եղելոց ընդ տեսչութեամբ վանօրէից և եկեղեցեաց որպէս 'ի հասարակի, նոյնպէս և մանաւանդ յելանելնոցա յայցելութիւն վիճակաց, գործակցելով յինքեանց կախեալ միջոցօք վասն բարեկարդութեան և ճոխութեան այսոցիկ ուսումնարանաց, նոքա յաւէտ փոյթ կալնուն յաղագս մուծանելոյ յայնս զկանոնաւոր և զհեշտընկալ եղանակս ուսումնատուութեան և յաղագս պահպանելոյ զբարի վարս յուսուցանողս և յուսանելիս միանգամայն :

Յ0Դ. 67. Թեմակալ առաջնորդք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ յայց ելանելն վիճակաց վերահասու լինին ամբողջութեան դոյից ընդ տեսչութեամբ իւրեանց եղեալ եկեղեցեաց և վանօրէից :

Յ0Դ. 68. Թեմակալ առաջնորդք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ զկնի այցելութեան ինքեանց հաւատացեալ վիճակաց, առաջի առնեն Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին Էջ-

միածնի զմանրամասն համար ամենայն գործոց իւրեանց :

Յ0Դ. 69. Ի վախճան ամենայնի թեմակալաւ աւաշնորդք Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ առաջի առնեն Լուսաւորչական Հայոց Սիւնհոդուին էջմիածնի ընդհանրական համար յաղագս գործոց վիճակին իւրեանց :

Յ0Դ. 70. Իւրաքանչիւր թեմակալ առաջնորդ Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ՚ի մտանել իւրում՝ ի պաշտօն առաջի առնէ Սիւնհոդուին էջմիածնի գնիշդ ցուցակ ամենայն եկեղեցական գոյից նմա հաւատացեալ վիճակին :

Յ0Դ. 71. Յետ վախճանի թեմակալ առաջնորդի Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ, եթէ մեռանի նա առանց կտակի, և չունի զօրինաւոր ժառանգս, սեպհական գոյք նորադառնան յօդուտ Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ այնը վիճակի. այս հոգացողութիւն յանձն լինի վիճակային հոգեւոր ատենից :

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս Լուսաւորչական Հայոց հոգեւոր ատենից (Կոնսիստորիայից) եւ հոգեւոր կառավարութեանց .

Յ0Դ. 72. Յիւրաքանչիւրում Լուսաւորչական Հայոց վիճակի, գտանի հոգեւոր ատենան (Կոնսիստորիայ) այսր դաւանութեան և բաղկանայ ՚ի չորից անդպմոց, ՚ի վարդապետէ միոյ

և յերից աւագ երիցանց կամ 'ի քահանայից յորում ատենակալ է թեմակալ առաջնորդն :

Յ0Դ. 73. Անդամք Լուսաւորչական Հայոց հոգեւոր ատենից նշանակին 'ի թեմակալ առաջնորդաց որք զընտրութենէ նոցին հասուցանեն 'ի տեղեկութիւն լուսաւորչական Հայոց Սիւնհոգուին էջմիածնի :

Յ0Դ. 74. Գիւանատունք լուսաւորչական Հայոց վիճակային հոգեւոր ատենից բաղկանան յատենադպրէ , 'ի թարգմանէ, յեկզէկուտօրէ՝ որ կատարէ միանգամայն և զպաշտօն գանձապետի և յարխիւարիւսէ և 'ի հարկաւոր թուոյ գրագրաց : Այսոքիկ աստիճանաւորք կարգին ընտրութեամբ հոգեւոր ատենին և հաստատութեամբ թեմակալ առաջնորդին : Ատենադպիրն և եկզէկուտօրն համարին 'ի տասներորդում կարգի , իսկ թարգմանն յերկոտասներորդում, ցորչափ դտանին նոքա յայսոմիկ պաշտամունս , և եթէ չունին ըստնախիին ծառայութեան կամ ըստ պաշտաման զայլ բարձրագոյն աստիճանս :

Յ0Դ. 75. Անդամք Լուսաւորչական Հայոց վիճակային հոգեւոր ատենից և աստիճանաւորք դիւանպատան նոցին 'ի մտանել 'ի պաշտօն իւրեանց , ըստ հասարակեալ կանոնի, երդնուն վասն հաւատարմութեամբ ծառայելոյ նորին կայսերական մեծութեան և իսկութեամբ կատարելոյ զպարտաւորութիւնս իւրեանց :

Յ0Դ. 76. Ի քննութեան և յընթացս գործոց լուսաւորչական Հայոց հոգեւոր ատենից

պահպանի կարգն սահմանեալ վասն Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին Էջմիածնի :

80Դ. 77. Առ պարագայս գործողութեան վիճակին հոգեւոր ատենից Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ՝ վերաբերին .

1. Անմիջական դիտողութիւն 'ի վերայ ստորագրեալ նոցին սրբազնագործ և ստորին եկեղեցական պաշտօնէից ամուսնացելոց և կուսակրօնից :

2. Հոգատարութիւն զբարեկարդութենէ հոգեւոր դպրոցաց , վանօրէից , եկեղեցեաց և աստուածահաճոյ շինուածոց 'ի նմին վիճակի եղելոց :

3. Խնամածութիւն այլեաց և որբոց եկեղեցական պաշտօնէից . . .

4. Կառավարութիւն կայից ամենայն ստորագրեալ նոցին վանօրէից և եկեղեցեաց :

5. Քննութիւն և վճռումն գործոց ըստ գանգատանաց ստորագրեալ նոցա եկեղեցեաց և ըստ վիճից նոցին ընդ իրեարս :

6. Քննութիւն և վճռումն գործոց՝ որ վասն պսակաց , բայց միայն առաջարկելով 'ի վերահասութիւն Լուսաւորչական Հայոց Սիւնհոսին Էջմիածնի ամենայն երկրայական դիպուածոց 'ի մասին ամուսնական գործոց :

7. Թոյլատուութիւն ժողովելոյ զկամաւոր նուերս յօգուտ ստորագրեալ նոցա Լուսաւորչական Հայոց վանօրէից , եկեղեցեաց , դպրոցաց և աստուածահաճոյ շինուածոց , բայց միայն 'ի սահմանս իւրոյ վիճակին ,

8. Թողլատուութիւն օտար անձանց բնակելոց՝ ՚ի վանօրայս որք ունին իրաւունս առ այն (ըստ Յօդ. 94 երես) :

9. Հաստատել զանդամն ՚ի հոգեւոր և ՚ի վանական կառավարութիւնս :

10. Նշանակել զդպիրս՝ ՚ի Լուսաւորչական Հայոց եկեղեցիս :

11. Առաջի առնել Հայոց Լուսաւորչական Սիւնհոգոսին Էջմիածնի յաղագս թոյլ տալոյ ումեք ընկալնուլ զհոգեւորական աստիճան, կամ յաղագս մերկանալոյ զայն :

12. Թողլատուութիւն կառուցանելոյ զաստուածահաճոյ շինուածս, և առաջարկութիւն առ Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսն Էջմիածնի յաղագս շինելոյ զնոր վանօրայս, զեկեղեցիս և զդպրոցս :

13. Ունել զճիշդ ցուցակս թուոց վանօրէից, եկեղեցեաց, դպրոցաց և աստուածահաճոյ շինուածոց, թուոց կուսակրօն և ամուսնացեալ եկեղեցականաց, և թուոց ժողովրդոց իւրաքանչիւր եկեղեցեաց և եղելոց՝ ՚ի դպրոցս նոցին ուսուցչաց, աշակերտաց և խնամարկելոց :

14. Առաջարկել առ Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսն Էջմիածնի ամի ամի զմանրամասն սեղեկութիւնս զվիճակէ ինքեանց ստորադըրեալ վանօրէից, եկեղեցեաց, դպրոցաց և աստուածահաճոյ շինուածոց, զմանրամասն համար զկառավարութենէ եկեղեցական կայից, և զցուցակ ծառայութեանց ընդհանրապէս ամե-

Նայն սրբազնագործ և ստորին եկեղեցական
պաշտօնէից իւրեանց վիճակի :

15. Ամսական ստուգութիւն ամենայն առ-
ձեռն եղեալ գումարաց և հաշուաթղթոց եղե-
լոց՝ ի հոգեւոր ատեանս, և որ ինչ ցուցանի
'ի ստուգութենէ անտի գրեալ յօրագրութեան:

Բ. Յաղագս հոգեւոր կառավարութեանց .

Յ0Դ. 78. Հոգեւոր կառավարութիւնք, որք
'ի վիճակս ինչ լուսաւորչական Հայոց Ռուսաս-
տանեայց բազկանան յերից անդամոց՝ 'ի վար-
դապետէ, կամ յաւագ քահանայէ իբր 'ի
նախադահէ, և յերկուց քահանայից : Գրաւոր
գործք յայսոսիկ կառավարութիւնս յառաջա-
նան 'ի գրագրէ՝ որ համարի յերկոտասանե-
րորդում կարդի :

Յ0Դ. 79. Անդամք Լուսաւորչական Հայոց
հոգեւոր կառավարութեանց նշանակին 'ի
թեմակալ առաջնորդէն : Գրադիրք ընտրին և
կարգին 'ի նոյն կառավարութեանց : Ի մտա-
նելն 'ի պաշտօն ամենե քին նոքա երդնուն առ-
հաւատարիմ ծառայութիւն :

Յ0Դ. 80. Հոգեւոր կառավարութիւնք լու-
սաւորչական Հայոց եկեղեցւոյ՝ ստորագրեալ
են վիճակային հոգեւոր ատենից այսր դաւա-
նութեան և ոչինչ կարեն կատարել առանց յա-
տուկ առ այն յանձնարարութեան հոգեւոր ա-
տենից :

Յ0Դ. 81. Լուսաւորչական Հայոց հոգեւոր

կառավարութիւնք՝ ժողովեն՝ ’ի ստորագրեալ
ինքեանց տեղեաց զամենայն հարկաւոր տե-
ղեկութիւնս վասն հոգեւոր ատենից այսր դա-
ւանութեան, առաջի առնեն նոցա զինդիրս
մատուցեալս՝ ’ի մասնաւոր անձանց և զպատ-
կանեալս քննութեան հոգեւոր ատենից հան-
դերձ իւրեանց եղբակացութեամբ, և տան վկա-
յութիւն զչափաբերական քաղուածոցն, այ-
սինքն ծնելոց, մկրաելոց, պսակելոց և այլն :

Յ0Դ. 82. Ի լրանալ ամին, Լուսաւորչական
Հայոց կառավարութիւնք, առաջի առնեն հո-
գեւոր ատենից այսր դաւանութեան որում
ստորագրեալ են, զհաշիւ գործողութեանցն
իւրեանց, եղեալ՝ ’ի միասին զտեղեկութիւնս զե-
կեղեցականաց, զթուոց եկեղեցեաց, զժողո-
վըրդոց, զծնելոց, զմեռելոց և զպսակելոց,
նոյնպէս և զհաշիւ ամենայն ստացուածոց ե-
կեղեցեաց ընդիշանութեամբ նոցին եղելոց :

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս մենաստանաց .

Յ0Դ. 83. Ամենայն մենաստանք Լուսաւոր-
չական եկեղեցւոյ Հայոց, որպէս արական սե-
ռի, նոյնպէս և իգականացն՝ ըստ զօրութեան
վաղեմի Սահմանադրութեանց այսր եկեղեց-
ւոյ՝ վարին կանոնօք Ա. Բարսղի մեծի :

ՅօԴ. 84. Ընկալմանն ’ի կրօնաւորութիւն նա-
խընթաց լինի փորձն ուկնդրութեան՝ ող կա-
տարի ըստ կարգին սահմանելոյ առ այս կանո-
նադրութեամբ Լուսաւորչական Հայոց եկեղեց-
ւոյ : Թուոց ուկնդրացն կրկին սեռի չէ պարտ
զանցանել քան զսահմանեալ թիւն աբեղյայից
կամ կուսանաց ’ի նմին մենաստանի :

ՅօԴ. 85. Ոչ ոք կարէ նուիրել զանձն ’ի կը-
րօնաւորութիւն առանց հրամանի Լուսաւոր-
չական Հայոց Սիւնհոդոսին Եջմիածնի , ըստ
առաջարկութեան թեմակալ առաջնորդին :

ՅօԴ. 86. Ցանկացողքն նուիրել զանձինս ’ի
կրօնաւորութիւն պարտին լինել երեսուն ամաց,
և ոչ պակաս . բացառութիւնք յայսմանէ կա-
րեն թոյլատրել ոչ այլ ազգ , բայց եթէ ըստ
յատուկ արժանայարդ պատճառանաց, ըստ զօ-
րութեան կանոնաց Լուսաւորչական Հայոց ե-
կեղեցւոյ , բայց սակայն ոչ արգիլեալ լինի մը-
տանել ’ի վանս վասն փորձոյ ուկնդրութեան
կանխագոյն քան զերեսուն ամն հասակի :

ՅօԴ. 87. Առ մտանելոյ ’ի վանականութիւն
և ընդունելոյ զփորձ ուկնդրութեան , կարեւոր
է նախ համաձայնութիւն այնոցիկ անձանց կամ
տեղեաց , զորոց կախին ցանկացողքն վանա-
կանութեան . հարկատու անձինք ոչ կարեն մը-
տանել ’ի վանականութիւն , բայց եթէ հրա-
մանաւ կառավարիչ Սինկղիտոսին (սէնաթօ) :

ՅօԴ. 88. Ամուսնացեալ անձանց թոյլատրի
մտանել ’ի վանականութիւն յայնժամ միայն ,
յորժամ չունին նոքա զդեռահաս զաւակունս ,

և երկոքեան ամուսինք յանկան ընդունել զկը-
րօնաւորութիւն :

80Դ. 89. Մտանողքն ՚ի վանականութիւն
հրաժարին միանգամայն և ՚ի տիրելոյ անշարժ
կայից իւրեանց , և զկնի նուիրմանն ոչինչ նո-
րոդ անշարժ սեպհականութիւն կարեն . ստա-
նալ , բայց ոչ արդիլեալ լինի նոցա դնել զայնս
յօդուտ եկեղեցեաց և վանօրէից այնոցիկ՝ յորս
են ինքեանք : Եթէ սոյնատեսակ կայք հասցեն
կրօնաւորի ումեք ըստ իրաւանց ժառանգու-
թեան , պարտապան է նա տալ կամ վաճառել
զայնս ՚ի միջոցի վեց ամսոց :

80Դ. 90. Վանականաց արդիլեալ է տուրե-
ւառութիւն ամենայն վաճառաց , բայց ՚ի վա-
ճառելոյ զսեպհական ձեռագործո իւրեանց , և
այն ոչ այլ ազգ , բայց եթէ հրամանաւ կառա-
վարութեան իւրեանց :

80Դ. 91. Ամենայն շարժական կայք թող-
եալք զկնի մահուան վանականին , պատկանին
մենաստանի նորին , եթէ չիցէ նորա արարեալ
զկտակ , և չունիցի զօրինաւոր ժառանգ :

80Դ. 92. Կրօնաւորելոցն՝ ոյոց ըստ զօրու-
թեան կանոնադրութեան լուսաւորչական Հա-
յոց եկեղեցւոյ ներեալ լինի . մերկանալ յինք-
եանց զկոչումն , ՚ի դառնալ նոցա ՚ի քաղաքա-
կան վիճակ , թոյլատրի վայելել միայն յիրա-
ւունս պատշաճեալս տոհմի և ծագման վիճակի
իւրեանց , առանց դարձուցանելոյ առ նոսա
զայնոսիկ առանձնաշնորհութիւնս , զաստիճանս
և զպատուանունս , զորս նոքա ստացեալ են

ցմտանելն 'ի վանականութիւն , նոյնալէս և
զկայս՝ թէ զայնո՝ որք հասեալ են նոցա ժա-
ռանդութեամբ , և եթէ զայնո՝ զորս վաստա-
կօք իւրեանց 'ի ձեռա բերեալ էին . նախ քան
զմտանելն 'ի կրօնաւորութիւն :

Յ0Դ. 93. Յիւրաքանչիւր մենաստանի պար-
տի լինել միայն սահմանեալ թիւ կրօնաւորեալ
անձանց և յամենայն դէպս ոչ սակաւ քան զութն
անձինս արեղայից կամ կուսանաց : Իսկ վասն
մենաստանացն այնոցիկ՝ յորս չէ որոշեալ այս
թիւ , Հայոց լուսաւորչական Սիւնհոդոսն էջ-
միածնի ըստ առաջարկութեան վիճակային իշ-
խանութեան կարդեսցէ համեմատ եկամտից
նոցին զճիշդ յայօմ մասին կանոնս :

Յ0Դ. 94. Ի լուսաւորչական Հայոց մենաս-
տանս , բաց 'ի սահմանեալ թուոյ կրօնաւորելոցն
և ունկնդրաց արական կամ իգական սեռի ,
կարեն բնակել ըստ սահմանի վիճակային իշ-
խանութեան 'ի վանորայս արականացն , զա-
ռամեռող և անօգնական սրբազնագործ և
ստորին եկեղեցական պաշտօնեայք առ 'ի ու-
նել զանունդ և զանդորրութիւն , և օրդիք
աղքատ սրբազնագործ և ստորին եկեղեցական
պաշտօնէից մանաւանդ որբք՝ որք կրթեալ
են 'ի սպասաւորութիւն եկեղեցւոյ : Իսկ 'ի
վանորայս իգականացն 'ի ծերութիւն խոնարհ-
եալ անօգնական այրիք և աղջկունք հոգեւորա-
կան կոչման , և դեռահասո որբք իգական սեռի 'ի
կրթութիւն և յուսումն արուեստի ձեռագոր-
ծութեան :

Յ0Դ. 95. Լուսաւորչական Հայոց մենաստանք կախեալ կան անընդմիջաբար և կատարելապէս զվիճակային իշխանութենէ այսր դաւանութեան, և պարտապան են 'ի վախճան ամենայնի տալ նմա զմանբաման համար ամենայն դործառնութեանց իւրեանց : Գանդատանք զվանական իշխանութենէ Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ մատուցանին թեմակալ արքեպիսկոպոսին այսր դաւանութեան :

Յ0Դ. 96. Ժողովումն կամաւոր նուիրանաց յօգուտ մենաստանաց լինի յայնմիկ վիճակի՝ ուր դատանի մենաստանն, և ոչ այլ ազգ, բայց եթէ յիւրաքանչիւր նուազս խնդրելով յատկապէս զհրաման 'ի վիճակային իշխանութենէ . իսկ յայլ Լուսաւորչական Հայոց վիճակս Ո.ուսաստանի, հրամանաւ Լուսաւորչական Հայոց Սիւնհողոսին Էջմիածնի ըստ առաջարկութեան վիճակային իշխանութեան, յամենայն դիպուածս այսոքիկ ժողովարարութիւնք յառաջանան ոչ այլազգ, բայց եթէ թոյլատուութեամբ քաղաքական իշխանութեան տեղւոյն :

Յ0Դ. 97. Լուսաւորչական Հայոց մենաստանք կառավարին արականացն՝ 'ի վանահայր վարդապետաց կամ յարբայից, իգականացն՝ 'ի մայրապետաց կամ յաբբասուհեաց, եթէ նոքա և եթէ ոոքա կարգին 'ի վիճակային իշխանութենէ հաստատութեամբ Պատրիարքին Էջմիածնի :

Յ0Դ. 98. Վանահայրք և մայրապետք Լուսաւորչական Հայոց մենաստանաց կառավարեն

զգործս նոցին ոչ այլ ազգ , բայց եթէ դործակ .
ցութեամբ կառավարութեանց վանօրէիցն այսր
դաւանութեան , բաղկայելոց ընդ նախագա-
հութեամբ վանահարց կամ մայրապետաց յեր-
կուց աւադագոյն նախապատիւ վանականաց
կամ կուսանաց՝ որք հաստատին լստ առա-
ջարկութեան վանահօր կամ մայրապետին ’ի
վիճակային իշխանութենէ :

80Դ. 99. Վանահայրք կամ մայրապետք լու-
սաւորչական Հայոց մենաստանաց՝ ’ի միասին
ընդհանրական կառավարութեանց այսր դա-
ւանութեան նկատեն , զի ճշդիւ կատարեսցին
եկեղեցական կանոնք և կարդաւորութիւնք ’ի
մենաստանս իւրեանց : Պահպանեն նոքա յամ-
բողջութեան զշարժական և զանշարժ կայս մե-
նաստանին , և պատասխանատու լինին զկանո-
նաւոր կիրառութենէ եկամտից , և ընդհան-
րապէս զբարեկարգութենէ ’ի նոսա յանձնեալ
մենաստանին :

80Դ. 100. Ամենայն մենաստանական եկամը-
տից և ծախուց լուսաւորչական Հայոց վանա-
կան կառավարութիւնք՝ պահպանեն զնիշդ հա-
շիւս՝ զոր ’ի միասին ընդ ցուցակացն ամե-
նայն շարժական և անշարժ մենաստանական
գոյից առաջի առնեն ’ի վախճան ամենայնի ’ի
վերահասութիւն վիճակային իշխանութեան :

80Դ. 101. Ի մեռանիլ կամ ’ի փոխիլ վանա-
հօր կամ մայրապետին , լուսաւորչական Հայոց
վանական կառավարութիւնք՝ դործակցու-
թեամբ ոմանց յերիցագոյն և ’ի նախապատիւ

վանականաց կամ կուսանաց առնեն զմանրա-
մասն ցուցակ գոյից վանացն , և առաջի առնեն
զայն վիճակային իշխանութեանն . ըստ այսմ
տումարի նոր վանահայրն կամ մայրապետն
՚ի մտանել իւրում 'ի պաշտօն ընդունի զմե-
նաստանն :

ԳԼՈՒԽ Է.

Յաղադս ամուսնաւոր եկեղեցականաց .

Յ0Դ. 102. Ամուսնաւոր եկեղեցականք լու-
սաւորչական Հայոց եկեղեցւոյ են նախ՝ աւագ
երիցունք , քահանայք , աւագ սարկաւագունք ,
սարկաւագունք և կիսասարկաւագունք . երկ-
րորդ՝ դպիրք կամ ստորին եկեղեցական պաշ-
տօնեայք :

Յ0Դ. 103. Ի կոչումն մասնաւոր եկեղեցա-
կանաց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ կա-
րեն մտանել հրամանաւ լուսաւորչական Հայոց
Սիւնհողոսին իջմիածնի ըստ առաջարկութեան
վիճակային իշխանութեան այսր դաւանութեան,
ընդհանրապէս անձինք ամենայն վիճակի ըստ
նախընթաց համաձայնութեան այնոցիկ անձանց
և տեղեաց զորոց ունին նոքա զկախումն : Հար-
կատու անձինք ոչ այլ ազգ անցանեն ՚ի հոգե-
ւոր կոչումն , բայց եթէ հրամանաւ կառավա-
րիչ Սինկղիտոսին :

Յ0Դ. 104. Արբազնագործ պաշտօնեայք լու-

սաւորչական Հայոց եկեղեցւոյ ըստ վաղեմի
կանոնադրութեան նորին նշանակին 'ի պաշտօն
և նուիրին 'ի հոգեւոր կարդ 'ի թեմակալ ա-
ռաջնորդաց այսր դաւանութեան , 'ի նոցունց
ձեռնադրին , դպիրք կամ ստորին եկեղեցա-
կան պաշտօնեայք կարգին 'ի պաշտօն ըստ
տնօրէնութեան վիճակային իշխանութեան , և
օրէնութեամբ քահանայի եկեղեցւոյն 'ի նոյն
վերադրին :

ՅՕԴ. 105. Մասնաւոր եկեղեցականք Լու-
սաւորչական Հայոց եկեղեցւոյ որոց գլխաւո-
րաբար յանձնեալ է կատարել զաստուածային
պաշտամունս 'ի ժողովրդապետական եկեղեցիս
և վճարել զհոգեւոր պէտս աշխարհականաց ,
'ի կատարել զայօսոփկ գերադոյն պարտաւո-
րութիւնս պարտուապատշաճ ջանասիրութեամբ
և իսկութեամբ , յամենայն դէպս պարտապան
են ջանալ հաստատել զժողովուրդս իւրեանց
'ի ճշմարտութիւն քրիստոնէական վարդապե-
տութեան , խրատելով և յորդորելով զնոսա
առ բարեպաշտ , համեստ և պատուաւոր կեն-
ցաղավարութիւն , ոչ միայն յորդորանօք , այլ
և օրինակաւ անձին , և ջանալով խոյս տալ
յամենայնէ՝ որ ինչ կարէ տալ պատճառս մե-
ղադրութեան նոյց ՚ի դատարկութեան իւր-
